

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Ապրիլի 18-ին, կիրակի.—Զատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Օրվա մեծ տոնի առթիվ վաղ առավոտվանից հավատացյալների և ուխտավորների հոծ բազմությունը լցրել էր Մայր տաճարն ու նրա շրջափակը:

Ժամը 11-ին, զանգերի ուրախ ու տոնական ղողանջի ներքո, Վեհափառ Հայրապետը, քահանայապետական շքեղ զգեստավորմամբ, Մայր Աթոռի միաբանության ուղեկցությամբ առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու զատկական ս. պատարագը:

Սուրբ պատարագի երգեցողությունն ապրումով կատարում է Մայր տաճարի երգչախումբը:

Ս. Սեղանին սպասարկում են տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, տ. Մասիս վրդ. Գալըստյանն ու տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը և Մայր Աթոռի սարկավագաց դասը:

Ս. պատարագի եկմալյան երգեցողությանն իր մասնակցությունն է բերում նաև տաղանդավոր երգչուհի Գոհար Գասպարյանը՝ պատարագի մի քանի երգերի հուզիչ կատարումով:

Ս. պատարագին ներկա են լինում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ֆրանսահայ հավատացյալների խումբը, որոնց թվում՝ Փարիզի «Հառաջ» թերթի խմբագիր տկն. Արփիկ Միսաքյանը և ծանոթ մտավորական ու Մայր Աթոռի բարերար պրն. Կարպիս Ջրբաշյանը:

Ս. պատարագին ներկա են լինում Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ՝ պրոֆ. Սարգիս Մելիքսեթյանը, Հովհաննես Թոփուզյանը, Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Եփրեմ Ալեքսանյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը:

Ս. պատարագին ներկա են լինում նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի

տեղական Անդրանիկ Հասրաթյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը և ուրիշներ:

«Հայր մեր»-ից առաջ, ս. Զատկի առթիվ, Վեհափառ Հայրապետը խոսում է կրոնաշունչ և հայրենաբույր մի քարոզ, որը նույն օրը, երեկոյան ժամը 23.30-ին, ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հայրապետական սույն քարոզը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Քարոզի վերջում Վեհափառ Հայրապետը հուզումով անդրադառնում է՝ շուրջ մեկ տարուց ի վեր Լիբանանում տեղի ունեցող քաղաքական ցավալի իրադարձությունների բերումով ստեղծված տխուր և ողբերգական կացությանը, որին զոհ են գնացել և՛ մահմեդական, և՛ քրիստոնյա, և՛ հայ ազգաբնակչության ներկայացուցիչներ:

Հոգեհանգստյան արարողությունից առաջ Վեհափառ Հայրապետը, ոգեկոչելով զոհվածների հիշատակը, ասում է.

«Սիրելի հավատացյալներ,

Այսօր մի բացառիկ պարագա մղում է մեր խիղճը՝ մեր քրիստոնեական և հայկական խիղճը, հոգևոր մի պարտականություն կատարել վերջին մեկ տարվա ընթացքում բազմահազար զոհված մարդկանց հիշատակը հարգելու և աղոթելու նրանց հոգիների խաղաղության և փրկության համար: Խոսքը վերաբերում է Լիբանանի զոհվածներին: Դուք գիտեք, որ այդ փոքրիկ, այդ գեղեցիկ և անցյալում շատ երջանիկ, արեվոտ ու խաղաղ երկրում վերջին մեկ տարվա ընթացքում տիրում է ներքին մի ողբերգական ծանր կացություն, իբրև հետևանք ներքին քաղաքացիական անհասկացողությունների: Ահավասիկ մեկ տարի է, ինչ կռիվներ են տեղի ունենում տարբեր հատվածների միջև, և գրեթե ամեն օր տասնյակ և հարյուրավոր մարդիկ են զոհվում: Արյունը հոսում է առատորեն և իզուր: Այնտեղ են ապրում, ինչպես քաջ գիտեք, նաև ձեր եղբայրներն ու քույրերը, մեր ժողովրդի և մեր եկեղեցու հարազատ զավակները, Լիբանանի հայերը, Բեյրութի հայերը: Այս ողբերգական կացության առաջ, այս սրբազան պահին մենք ուզում ենք աղոթել, աղոթել՝ Լիբանանում բոլոր զոհվածների, և՛ մահմեդական, և՛ քրիստոնյա, ու հայ զոհերի հոգիների խաղաղության և փրկության համար: Կամենում ենք նաև աղոթել, որ Աստված ողորմի և շուտափույթ կերպով վերահաստատվի ներքին խաղաղությունն ու համերաշխ գործակցությունը լիբանանյան բոլոր համայնքների միջև, որպեսզի այդ երկիրը վերստին շարունակի իր երջանիկ կյանքը ինչպես առաջ, և մեր ժողովրդի զավակներն էլ անվտանգ պահպանեն իրենց համայնքային կյանքը և շեն ու պայծառ պահեն իրենց աղոթքի Տները, իրենց կրթական, մշակութային ազգային հաստատությունները:

Այս աղոթքով, այս մաղթանքներով, այս բարի հույսերով, այս բարի սպասումներով, սիրելի ժողովուրդ, մի անգամ ևս գոչենք.

«Փառք հրաշափառ յարութեան քո Տէր»: Ամեն»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ տեղի է ունենում հոգեհանգստյան արարողություն: Վեհ ու տպավորիչ հնչում է հոգեհանգստյան հուզիչ շարականը՝ «Գթա Տէր ի հոգիս մեր ընդ ջեցելոց»՝ կոմպոզիտոր Ալ. Հարությունյանի դաշնավորումով:

Հայոց Հայրապետը «Հոգւոց» է արտասանում Լիբանանում զոհված անխտիր բոլոր քաղաքացիների հոգիների համար:

Ս. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան, որտեղ Նորին Սրբությունն ընդունում է միաբանության և հավատացյալների ջերմ շնորհավորանքը՝ Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առթիվ:

Հանուն Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռի միաբանության և բոլոր ներկաների լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը շնորհավորում է Հայոց Հայրապետի Զատիկը: Նորին Սրբությունը, խոսք առնելով, շնորհավորում է բոլոր ներկաների ս. Հարության տոնը և օրհնում ազգն ու եկեղեցին, ժողովուրդն ու հայրենիքը:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը տրվում է զատկական ճաշկերույթ: